ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/147

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Լյուսաշ» ՍՊԸ և «Արբակ և որդիներ» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր)

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցում, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում

Մասնակցությամբ՝
«Լյուսաշ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Լ. Գասպարյանի
«Արբակ և որդիներ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արբակ Հովհաննիսյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.09.2019թ.-ի թիվ 26/26-1/14919-2019 գրությամբ «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր)

(այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 04.09.2019թ.-ի թիվ 02/16.4/5237-2019 գրության հիման վրա, 09.09.2019թ.-ին «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր), ինչպես նաև «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր, միաժամանակ խնդրելով ապահովել ընթացքը «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/16» ծածկագրով ընթացակարգի մասով:

Բողոքներ քննող անձի 09.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 18.09.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 18.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.10.2019թ.-ին:

2. ՍՑ-LO-2019/147 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2019թ.-ի թիվ 26/26-1/14919-2019 գրությամբ «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը պետք է թողնել առանց քննության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.- թիվ 600-Ն հրամանի 4-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը նախաձեռնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ Գնումների քաղաքականության վարչության միջոցով, համապատասխան փաստաթղթերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց գրավոր տրամադրելու եղանակով: Ընդ որում, գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց փաստաթղթերի բաշխումն իրականացնում է սույն կետում նշված վարչությունը՝ հաշվի առնելով սույն կարգի 3-րդ կետով նախատեսված հերթականության սկզբունքը, իսկ ընթացակարգը համարվում է սկսված փաստաթղթերն Անձին տրամադրվելու օրվանից: Սույն կետով նախատեսված ընթացակարգը սկսելու հիմքը Գնումների քաղաքականության վարչության կողմից Անձին տրամադրված փաստաթղթերն են:

Սույն գործի փաստերի համաձայն՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 04.09.2019թ.-ի թիվ 02/16.4/5237-2019 գրության հիման վրա, 09.09.2019թ.-ի թիվ 26/26-1/14919-2019 գրությամբ «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր), ինչպես նաև «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերի ուսումնասիրությունը «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/16» ծածկագրով ընթացակարգի մասով մակագրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Լ. Օհանյանին, իսկ «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/15» ծածկագրով ընթացակարգի մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին:

Վերոհիշյալով պայմանավորված, միաժամանակ նախաձեռնվել է ՍՑ-ՆԳ-2019/153 ծածկագրով և ՍՑ-ԼՕ-2019/147 ծածկագրով «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2019թ.-ի թիվ 26/26-1/14919-2019 գրությամբ ներկայացված «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/147 ծածկագրով ընթացակարգը պետք է թողնել առանց քննության, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/15» ծածկագրով «Լյուսաշ» ՍՊԸ-ի և «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ նախաձեռնվել է երկու ընթացակարգ, այն դեպքում, երբ «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/15» ծածկագրով ընթացակարգի քննությունը մակագրվել է եղել Գ. Ներսիսյանին:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2019թ.-ի թիվ 26/26-1/14919-2019 գրությամբ «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/147 ծածկագրով ընթացակարգը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**